

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կրօնական, Ազգային, Գրական



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ


ԶԱՐԲԱՅԻՐ ՔԱՂԱՆՁՈՑ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ	ՇԱԲԱԹ, 17 ՅՈՒԼԻՍ 1910	ԹԻԻ 16
“ՏԱՃԱՐ,,Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	ԲՍԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ	
	Պոլսոյ համար տարեկան	35 դրու
	Գաւառաց » »	40 »
	Արսասահմանի համար տարեկան	10 Ֆրանկ
	Զեռէ կը ծախուի տրակը	40 փարա
Բաժանորդ ազիները կանխիկ են		

ՏԱՃԱՐ,,Ի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար սէտք է դիմել առ
 Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշիքթաւ, Հայոց Եկեղեցի,

درسماعاته بشکطاشده ارمنى کليسا منده « داجار » غزتمى مدبرى پاپاس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian Rédacteur de la Revue «DAJAR»
 Constantinople, Béchiktache Eglise Arménienne



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԵՍ ՆԵՐՍԷՍ

Կ. Պոլիս, Պապը Ալի, Շերեֆ փողոց, բիւ 33

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գաղէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գաղէմեան
5. Տ. Հմայեակ Բհնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիւտակէս Բհնյ. Հիւսկեան
7. Տ. Զարմայր Բհնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բհնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բհնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բհնյ. Պաշխմեան
5. Տ. Պօղոս Բհնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բհնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բհնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բհնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

« ՏԱՃԱՐ » ԿՐԾՆԻԹԵՐԹԻ

- ԱՂԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
- ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դարիկեան
- ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Դափթեանեան
- ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգին Բհն. Պղարեան
- ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր Ա. Բհնյ. Տօնէլեան
- ԲԱՔԵՐԴ. — Ս. Սանտեան Էֆ.
- ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Ծ. Վրդ. Կիւլէւէրեան
- ԳԱՀԻՐԷ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւնուհի
- ԵԴԵՍԻԱ. — Բ. Թիւրաթեան Էֆ.
- ԵՕԶԴԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքսեան
- ԵՐԶԵԿԱ. — Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրուսճեան
- ԵԻԴՈԿԻԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Արտաւազ Վրդ. Գաղէնաթեան
- ԶՄԻՒՌԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ. Սարգիսեան
- ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ. Գալուստեան
- ԽԱՐԲԵՐԴ. — Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ապանեան
- ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սասունթեան
- ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս Էֆ. Թոքապեան
- ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ. Նշանեան
- ՀԱԼԷՊ. — Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
- ՄԱՆԶԷՍԹՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ա. Եպիսկ. Իւթիւճեան
- ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժապետեան
- ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ Էֆ. Սրապեան
- ՆԻԿՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան

- ՆՈՐ ԶՈՒՂԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապետեան
- Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ. Տառեան
- ՈՒՇԱՔ. — Կարապետ Էֆ. Բէհեանեան
- ՊԱՆՏՐՄԱ ՊԱԼԷՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլարեան
- ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կէօմբիւքճեան
- ՊԱՅՐԱ. — Կարապետ Էֆ. Բէրթմէնեան
- ՊԱՐՏԻԶԱԿ. — Յովհաննէս Էֆ. Տ. Կալապետեան
- ՊԷՅՐՈՒԹ. — Հոգևոր Տեսուչ Տ. Եղև կիւլ Վրդ.
- ՊՈՒՐԷՇ. — Դադարոս Էֆ. Կանիկեան
- ՊՐՈՒՍԱ. — Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա. Եպիսկ. Արշարունի
- ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջնիկեան
- ՌՈՏՈՍԴՈ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բաթող Բհնյ. Թաքմճեան
- ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդ. Օտապաշեան
- ՍԵՖԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլ Բհնյ. Օտապաշեան
- ՍԵԼԱՆԻԿ. — Հոգևոր Տեսուչ Տ. Կարապետ Բհնյ. Թուխմանեան
- ՍՕՖԻԱ. — Տ. Մկրտուկ Բհնյ. Տ. Մկրտուկեան
- ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէդեան
- ՏԷՏԷ ԱՂԱՃ. — Տ. Գարեգին Բհնյ. Տէօլէթեան
- ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ Էֆ. Մովսէսեան
- ՏԻՄԷԹՕԴԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
- ՏՓՂԻՍ. — Հ. Առաքելին
- ՓԱՐԻԶ. — Հոգևոր Տեսուչ Տ. Վառճապետ Բհնյ. Քիպարեան
- ՔԷՕՍԹԷՆՃԷ. — Տ. Մատթէոս Բհնյ. Մանիկեան
- ՔԲԻ. — Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
- ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
- ՖՐԷԶՆՕ. Յակոբ Էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ Կրօնական, Ազգային, Գրական

Ս. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 17 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Նիւթն ու հոգին. Պայքարը
զիսութեան եւ կրօնին մէջ, ջարտութիւնը ՔԱՆԱԿԱՆ. — Վերանորոգութիւն Հայ Եկեղեցւոյ,
Բ. Լեզուի խնդիրը, ՎԱՐԴԱՆ ԲՆԱՌԱՆԱՆ. — ՊԱՏՄԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Սեփական
Սիւնեցի, ԿՐԻՏԵ ՎՐԴ. ԽԱՇԵՆԱՆ. — ԳՐԱԽՈՍԱԿԱՆ, Ամիս մը ի Կիլիկիա, ԱՏՐՈՒՇԱՆ. —
Պատմ. Հայ. Չայնագրութեան, ՎՐԻՍ. ԲՆԱՌԱՆԱՆ. — ՄՈՌՅՈՒՍԱՆ ԷՋՆՐ, Սիւնեցական
սերտերը, ՍՐԲՈՐ ԱՐԲՈՐԱՆ. — Արեւին դեմ (Քերթում) ՍՐՏԱՆԱՂՎԱՐ. — Աղօթք (Քեր-
թում), ՎՐԴԱՆ ԽԻՏԱՎԵՐՏԱՆ. — ԱԶԳԱՅԻՆ ԿՆԱՆՔԸ, Շաբթուան կարեւոր լուրեր,
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԻԹՆ ՈՒ ՀՈԳԻՆ

ՊԱՅԻՐԱՐԸ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՈՆՔԻՆ ՄԷՋՏԵՂ

ԵՐԵՐՈՐԴ ԾՅՈՒՈՒԱԾ(1)

«Գիտութիւնն այսօր այնպիսի հսկայ
յեզաշնչութիւններու ենթարկուած է, որ ա-
մենէն աւելի զօրեղապէս հաստատուած վար-
դապետութիւնները կը ցնցուին իրենց հի-
մերէն:»

Գիտական միտքի մը հաստատում ի-
րողութիւնն է այս՝ զոր յառաջ կը բերենք
ստալին յօդուածով մը, պարզելով նշա-

(1) Առաջին յօդուածը տես թիւ 11րդ,
մայիս 15: Այժմեական առաս նիւթերու
ստիպողականութեան պատճառով, յապա-
ղեցաւ ներկայ յօդուածը, որ պիտի ու-
նանայ իր յաջորդները:

նաւոր հեղինակութեան չը՝ Կիւսզազ Լը-
պօնի տեսութիւնը նիւթին կազմութեան
վրայ, որու համաձայն հիւլէները՝ նիւթա-
կան ախարհի կազմութեան նախատարրերը՝
յառաջ կուգան խտացեալ տեսակ մը ուժէ,
որ անհուն անջրպետին մէջ սփռուած, կը
ծառայէ նիւթերու կազմութեան, որոնք կը
չըջափոխուին ու կը փոփոխուին աշխարհ-
ներու մէջ:

Ուժին և նիւթին յարաբերութիւնը
մէկն եղած է այն վրդովիչ խնդիրներէն
որ դարերէ ի վեր կը զբաղեցնեն միտքերը,
առանց երբեք գիտնականապէս վճռական
լուծում մը տալու: Իրողութիւնն այս
էր մինչեւ վերջին տարիներս: Նիւթը
չոչնչանալու այսպէս վճռուած էր սկիզբէն
ի վեր: Լուրերստիս իր բանաստեղծութեան
մէջ այդպէս ընդունած էր. նոյնը հաստո-
տած էր Լափուազիէ՝ յաւիտենական նկատ-
ուած սկզբունքներու հիման վրայ: Եւ
տակաւին վերջին ժամանակներս, Մ.
Պլերիլը, ժրտնասկան զիտութեան հաշա-
կաւոր ներկայացուցիչներէն մէկը, նիւթը
և ուժը իրարմէ լալարովին տնջաւոր բաներ

կը նկատէր, և զայդ կը հաշակէր իբրեւ հիմնական վարդապետութիւն մը, որուն վրայ հաստատուած են ֆիզիքական և մեքենական գիտութիւնները: «Հիմա, սուկայն, այդ ամէնը կը կործանի ու բան մը չի մնար ատոնցմէ: Գիտական վարդապետութիւններն որով անած ենք, մեռնելու վրայ են, մեզի կը մնայ ատոնց սուգը բռնել միայն:» (Ch. Fiessinger.)

Ըստ Կ. Լըպոնի նոր տեսութեան, հիւլէն անհուն ընդունարուն մ'է ուժի, կազմուած կարգ մը անկշռելի տարրերով, որ իր հաւասարակշռութիւնը կը պահէ զինքը կազմող մասերու թաւալումներով, ձգողութեամբ, վանողութեամբ: Այդ ուժը ինչպէ՞ս կըրտէ է խտանալ հիւլէին մէջ. չենք գիտեր: Այդպիսի հարցում մը նախատեսութեանց սահմանէն դուրս կը մնայ: Մ. Լըպոն կը պատասխանէ սովայն. «Գերազանց իմացականութեան մը համար կարելի է անշուշտ, կ'ըսէ, ըմբռնել ուժը առանց նիւթի. որովհետեւ ոչինչ կը հաստատէ այդ ուժին համար լծակի մը գոյութիւնը:»

Այսպէս, ուրեմն, մեր ուժը կը խտանայ հիւլէի մը մէջ, և այս հիւլէները համախմբուելով նիւթը կը կազմեն: Նիւթը կ'անհետանայ յամբարայր՝ զինքը կազմող հիւլէներու շարունակական անջատմամբ, և այս յամբ ու շարունակական կազմալուծման աշխատութիւնը կ'ազատագրէ հիւլէական ուժը, և կը թոյլատրէ անոր՝ ծաւալիլ դուրսը: Հիւլէին մէջ դրնուած ուժը այս կերպով ազատագրուելով՝ կ'ոգեւորէ տիեզերքի ուժերուն մեծ ժառը, մասնաորապէս ելեկտրականութիւնն և արեւուն ջերմութիւնը: Պարզ բաներով բռնեք, ուժը նիւթը կը ստեղծէ, նիւթը ուժին կը դառնայ: Ահա՛ ձուկոտաղբակն չըջանակը:

Տիեզերքի ծագման և անոր վտանգներն վրայ յայտնուած այս տեսութիւնները շատ անկաւար, շատ ակար լոյս մը կը կազմեն: Գիտութիւնը չի կրնար տեսլի պայծառ, յստակ լոյս մը տիւնել, ու ասկիւնին չընդնշմարտիլ այն վայրկեանը, երբ պիտի կարողանայ երեան հանել իրերու պտտման

ոը, ոչ թակ որոշակի ճշդել միակ բնութեան թի մը իրական շարժառիթները, Մ. Լըպոն իր տեսութիւնները կը վերջացնէ սա յուսահատական եզրակացութեամբ: «Պէտք է կրօնքներուն ու փիլիսոփաներուն թողուլ որ երեւոյցն ու զաննն այնպիսի դրութիւններ, որ զոհացում տան մեր ճանչնալու, զիտնոյլու, սովորելու պէտքին»:

Եւ Մ. Լըպոնի գիւտը, եթէ կը չփոխեցնէ չեզոք գիտնականները, բոլորովին չիսթութեան կը մտնէ նիւթապաշտներու հոյը: «Աստիք երբ բնագիտական խնդիրներու կը մտնեն, այնպիսի հպարտ ինքնավատահաթեամբ մը կը խօսին, որ չեն հանդուրժեր սեէ պատասխանի: Բոլորովին անգէտ գիտութեան սահմանին, կը մտորին տախտկութեանց մէջ, գոռոզ և ինքնագոհ:» (Շ. Ֆիսկեմէ): Այսպէս, Լ. Պուստ կը գրէ (1). — «Ինչ որ այ րօտի, աննիւթ նիւթ մը ըմբռնել անկարելի է. որովհետեւ իր կզրերն անգամ հակառակն են, և մարդ զանոնք միայնել ջանալով, կը հակառակի իրայ բնութեան և բանականութեան: Բայց այդ բանականութիւնն էր որ ժամանակաւ կը ներշնչէր Սդրագլուրի ծերունի բրօքէսէօս մը, սալոյցոյ ապացոյցի վրայ զիջել՝ հաստատուելու համար թէ՛ զործնականապէս բոլորովին պարապ աշխատութիւն մ'է փորձեր կատարել. չոգիով շարժում յառաջ բերելու համար: Շողին հրաշալի ուժ մ'է այսօր, որ կերպարանափոխ բբաւ ճարտարարուեստը, և ամբողջ աշխարհը: Մարդկային միտքը զոր բանականութիւն կը կոչենք, զառապարտած է միշտ այն բոլոր բաները որ վեր են իր ունեցած ճղճիմ ծանօթութիւններէն, որոնց վրայ կը հիմնէ իր վճիռները: Գաղով իրերու բնութիւնը բաւածին, ոչ ոք գիտէ թէ ի'նչ կը նշանաւէ այդ բառը: Աննիւթ նիւթը բացառութիւնը, զոր չի կրնար ըմբռնել Պուստ, շատ լուս կը պարզուի Մ. Լըպոնի հետազոտութիւններով, որոնց վրայ գաղափար մը արուեստ: Աննիւթ նիւթը ուրիշ բան չէ, եթէ ոչ ուժը՝ խտայնութիւնն ատմը:

(1) «Մանուան հարցը. երեւակայական բաժնումներ եւ դրական գիտութիւն»:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Բ.

ԼԵՋԱՌԻ ԽՆԴԻՐԸ

Հայոց Եկեղեցւոյ վերանորոգութեան հարցին մէջ աւննէն աւագ մասն է լեզուի խնդիրը՝ թողոր ուրիշ բարենորոգումներուն հետ բաղդատուելով։ Ասիկայ մէն միայնակ կարեորագոյնն է։ Եւ զարի երանաշնորհ Նախնիք, դար մ'անցած էր Հայուն թողորական քրիստոնէութեան զարթէն սկսեալ, և սակայն տեսան թէ քրիստոնէութիւնը չէ թափանցած ժողովուրդին հոգիին մէջը և արտաքինապէս քրիստոնեայ Հայը կուարտշտ մնացած է իր ներքինին մէջ։ Թէ և միշտ կար բաշտարող պաշտօնեան՝ երբ որ ասորերէն կամ յունարէն կը կարդացուէր Ս. Գիրքը, և սակայն շատ հարեանցիկ՝ լրար շարաթին մէջ հեղ մը ժամի մը շափ խօսուած խօսքը՝ ժողովուրդին մտքին վրայ աղղեւու ուստի և կը տառապէին Սահակ ու Մեսրոպ, այդ Հայաստանեայց աղղի անմահանուն հայրապետները, և Եկեղեցիին հիմը հաստատուն կռուանի վրայ զնկու կը ձեռնարկէին՝ Հայկական այրուքնի հնարքովն ու Ս. Գրքի հայկական թարգմանութիւնովը։ «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։» Սակայն 1500 տարիներ անցեր են այդ օրէն իվեր, և զոնէ 7 դարեր են որ ա'լ հայ ժողովուրդը զժուար կը հասկնայ ոտտանիկ հայերէն լեզուն, որով ութը դարեր մտաւոր սնունդ առեր և հոգեկան կազդուրում ըստացեր էր։ Այո՛, ժԲ. դարէն ասդին լեզուն հիմնապէս կը սկարանար և բողբոլին կը մեռնէր. ու այսօր ցաւալի է քեզ, բայց ճշմարտութիւն է խոստովանիլ, թէ ոչ ոք կը հասկնայ եկեղեցիի պաշտամանց և Ս. Գրքի խօսքերը։

Ինծի շատ մը առարկութիւններ պիտի ներկայացնեն ընդդիմաբօսներ. սակայն ըստիպուած եմ պատասխանելու ի չափ եկեղեցւոյն և յոգուտ ճշմարտութեան թէ իսպառ անհասկնալի է զրարար լեզուն, և Հայ ժողովուրդը բնաւ չիմութիւն չառներ Եկեղե-

Այս բոլոր տեսութիւնները, որ կը խոստովանինք թէ քիչ մը զժուարիմաց են սովորական միտքերու համար—որոնք առիթ և գիւրութիւն ունեցած չեն զբաղելու պիտակտն նորութիւններով կամ բնազանցական հարցերով, —մասնաւոր նկատուութեանը կ'ուզենք յանձնել բոլոր ճշմարտախնդիր հոգիներու որոնք վարանած կը մնան, տարակոյսի՝ կասկածանքի աքծանկն մէջ պրկուած։ Իրենց այդ տարակոյսը ծագում առած է ոչ այնքան անձնական հետազոտութիւններէ, որքան սկեպտիկ միջավայրի մը տարածած թիւր գաղափարներէն, ծնունդ՝ գիտական սկզբանց մակերեսութային ծանօթութեան մը միայն։ Բայց իրերու արտաքին երեւոյթները խաբէական են յաճախ։ Ովկիանոսի խաղաղ, միտպաշտ մտկերեսին տակ ահաւոր անդունդներ կը ծածկուին, և անոր խորքերուն տակ չթափանցուած դադունիքներու անհունութիւն մը կը պիտուի։

Բնութիւնն իր յաւիտեական օրէնքներուն և գաղտնիքներուն աննշան մէկ մասնին հաղիւ յայտնած է ցարդ տկար մարդկութեան։ Դարերու աշխատութեան, յարստե փորձարկութեանց, մաքառումներու, անձնութիւններու արդիւնքն է այն պզտիկ ծանօթութիւնը զոր մարդկութիւնը ձեռք բերած է անհունութիւններու, խորհուրդի աշխարհին մէջէն. և այդ փորձերու և անձնութիւններու հերոսները, պիտութեան ճշմարիտ մարտիրոսներ, խոնարհութիւնը, համեստութիւնը ունեցած են միշտ խոստովանելու ձեռք բերուած արդիւնքին աննշանութիւնը, իրենց մտքի հասողութենէն վեր, մարդկային իմացականութեան տակաւին անբմբռնելի գաղտնիքներու անհամարութիւնը, տիեզերքը վարող անհուն Իմացականութեան մը գոյութեան անխուսափելիութիւնը։

Խոշոր սիւսլ մը, իմաստակութիւն մը պիտի ըլլար բացարձակ ժխտումը այն բոլոր բաներուն որոնց գաղտնիքին չենք կրցած թափանցել։ Վճռականութիւնը՝ առկա ընդ մէջ, բայց մանաւանդ մեր խելքէն զերթկեր բաներու մէջ, սոցիալական յայտարար նշան մը պիտի ըլլար պարզապէս։

ԶԱՐԿԱՅՐ ՔԱԶԱՆԱՅ

ցիւն, և եթէ եկեղեցիին մէջ լաւ երաժշտութիւն և անուանի քարոզիչ մը չկենայ, Հայը պիտի դադրի եկեղեցի երթալէ: Երաժշտութիւնը հաճելի ժամանց մը, ու հասկնալի քարոզը իւրեւ մոգի գոհացում՝ առթող բան մը կը հրապարակն մէկ քանիները: Լեզուն է այն հզօր ազդակը որով սրբազան թարգմանիչները կրցան հայ ժողովուրդին սիրելի ընել Ս. Գիրքը և Քրիստոնէութիւնը: Եթէ Սահակի ու Մեսրոպի պէս անուանի հելլենագէտներու հարցուէր թէ յունարէն լեզուն է վսեմը թէ հայերէն լեզուն, հաստատ զիտեմ թէ պահիկ մը հայրենասէր զգացումէ անկախ վիճակի մը ենթարկուելով՝ պիտի խոստովանէին թէ Հոմերոսներուն լեզուն անողուգական էր. և սակայն բազմերախտ մեր այդ Լուսաւորիչները ձգեցին աշխարհի ամենէն գերազանց լեզուն և Հայերէն լեզուն ձեռք առին. վտանգի հայրենիքի սէրը և ժողովուրդին յառաջդիմութեան պէտքը լսեցուցին իրենց մէջ հելլենասիրութիւնը, և Ս. Գրքի թարգմանութեանց թաղուհին դուրս եկաւ իրենց օծուն գրիչէն: Հիմակ ալ միեւնոյն գիրքին մէջն է ազգը: Մի՛ ըսէք մեզի թէ վսեմ է հայերէն գրաբար լեզուն: Հիանալի են մեր Նախնեաց շարադրած մաղթանքները, աննման են մեր մեղեդիներն ու շարականները. սակայն նոր Սահակն ու Մեսրոպը արդէն իսկ զգայած են ժողովուրդի պէտքը, և հարկ է որ իրենց զգացումը մարմնացնեն: Պէտք է որ Ն. Ս. Օծութիւնն ու Բարձրաշնորհ Գաբրիան Սրբաւան տան մըստ գազափարին, և ժողովուրդին հասկնալի լեզուն վերածեն Ս. Գիրքն ու Հայ Եկեղեցիին բոլոր պաշտամանց, ծէսերու և երգերու լեզուն: Թող չառարկին մեզի թէ երկու դարգաշած լեզուներու առջև կը գտնուինք, ո՞րը նախաձեռնար պիտի սեպենք: Ժողովուրդին օգուտին առջև ամեն նկատում պէտք է խոնարհի:

Թող երկու լեզուներ, երկու մեծ կեդրոններու մէջ գործեն և Եկեղեցին թող շինուի իւրն առնէ: Զեկն հետ ի՞նչ զործ ունի Եկեղեցին. հիմն է հարկաւորը. հիմնական պարսպան աչք է թէ Հայ Ժողովուրդը չի հասկընար Եկեղեցիին լեզուն, ո՛չ Ռուսահայոց մէջ

և ո՛չ ալ Թուրքահայոց մէջ: Ինքզինքնիս չիտաքենք թէ գրաբարը կրնայ կենդանանալ, տարածուիլ և օր մ'ալ հասկնալի դառնալ բոլոր ժողովուրդին. առի անկարելի է: Ինչպէս որ կը մային անհոտ մարդուն պէս, կը գտնամին ու կը մեռնին: Եթէ Վենետիկի ու Վիեննայի վանքերը երկու դարէ ի վեր այդ անկախելին հետապնդած չըլլային և աշխարհիկ պահանջութեան վրայ թափած ըլլային իրենց գերմարդկային ճիգերը՝ ազգին կայութիւնը բոլորովին տարբեր պիտի տեսնէինք հիմա:

Հայ Եկեղեցին՝ կասկեմով դրաբարի դադարաբին, այո՛, բոլորովին պիտի ուժացնէ հաւատացեալները, սրտեք արդէն հիմա կը յայտնեն իրենց ծանձրոյթը եկեղեցիէն դուրս ելլելով, երբոր եկեղեցիին մէջ կը սկսին կարգացուիլ Ոսկերեանի, Բարսեղի, Կամբրոնայի հիանալի գլուխ գործոյնները: Ինչո՞ւ. — Վառն գի դրաբարեն: Փորձէ՛ կարդալ գանձեք աշխարհաբար, և պիտի տեսնես որ ջերմեանդօրէն պիտի գան ունկնդրելու և պիտի արթննայ իրենց մէջ սէրը՝ հոգեւոր գաղափարներու, ստաքինի կենցաղի հետ: Այդ փորձը ժամանակէ մը ի վեր կը գործադրեն եկեղեցականներէ ոմանք, և յաջողութիւնը ակներեւ է:

Երբ լեզուի խնդիրը լուծուի, ամենէն բանաւոր, ամենէն իրաւացի բողոքի պատճառը պիտի դադրի մեր բողոքական եղբայրներէն, և տաջին հսկայ քայլը պիտի տեսնուի մեր ու անոնց միջև ըլլալիք միաբանութեան:

Կ'արժէ որ ի շինութիւն ժողովրդեան գոհնեք մեր կանխակալ կարծիքները, և անհասկնալի շփեղութենէ մը հտ կենանք, իւրական յառաջդիմութիւնը կերպաւորելու և ի կապար ածելու համար:

Փոխենք Եկեղեցիի լեզուն և վերածենք հոգեւոր բոլոր գործերը ժողովրդին հասկնալի երկու պատուական հայերէններուն, այսինքն Արեւելեան և Արեւմտեան հայերէններուն:

Ան ի՞նչ տղուոր ձեռնարկներ էին ո՞ր գործուեցան երբ աշխարհաբար թարգմանեց Տէր Մկրեան՝ Ժամագիրքը, Երուանդ Տէր Սեդրէտեան՝ Շարականը, Բաաթմա՝ Նարեկեային, Խորէն Վ. Ստեփանէ՝ Խորենային, և

մեր պրակտիկական պարծանքի ուրեան Սըր-
րազան՝ Շնորհալիի գոհար երգերը : Եւ լու-
րորովին նպատակադրմար կը գտնեմ բնու-
պիրին բարձրութեան հաւասարող այդ գող-
տորիկ թարգմանութիւնները այժմէն երգել
եկեղեցիներու մէջ : Թող ժողովուրդը երգին
վսեմ իմաստին ալ տեղեկանայ՝ երաժշտու-
թիւնը լսելով զմայլած ատեն, և այդ պիտի
լլայ խոշոր ու հիմնուոր յառաջդիմութիւն
մը :

Մարդ չի սիրեր իր չհասկցածը :

Ձի գլածուիր վսեմ խօսքերէն երբ չի
թափանցեր անոնց իմաստին :

Ձի յուզուիլ յեղաշրջիչ փիլիսոփայու-
թեանէն, երբ անորոշ ու սարսափեալ են նախա-
դասութիւնները, և երբ ինք անյուր ճիգեր
պիտի թափէ՝ նախ թարգմանելու խօսքերը
և ապա ըմբռնելու, մինչդեռ կը կարգադրուին
անոնք իրարու ետեւ, աւանց հանգիստի :

Մեր նախնիքներու լեզուն, գրականու-
թիւնը, սիրելի ու պաշտելի են մեզի : Բայց
նոր լեզուին վերածուելէ ու թարգմանուելէ
վերջը, ինչպէս որ մեր սրբազան թարգմանա-
չաց համար հիանալի էին յունարէն լեզուն
ու դասական մատենագրութիւնը, բայց
թարգմանուելէ ու հայտնուել վերջ :

Յեղաշրջենք եկեղեցիի լեզուն, և եկեղե-
ցին պիտի պայծառանայ, զօրանայ և բար-
դաւածի :

ՎԱՐԴԱՆ ՔՃ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՊԱՏՄԱՒԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՐՆԵՅԻ

(Գ*)

Հարկ չկայ խնդիր յարուցանելու թէ
Ստեփանոս Սիրնեցի կարդացած է արդեօք
փոքր Սոկրատը որ ինչպէս յայտնի է՝
Փրկչի 696 թուին, Ներսէս Կամսարականի
հրամանով, ի ձեռն Փիլոնի Տիրակայւոյ
թարգմանուած մեծ Սոկրատին վրայէն և
հետեւաբար աւելի վերջերը փոխուած, նո-

րամուտ յաւելածներով ճոխացած, գրեթէ
հայացած գիրք մը զարձած է : անհաւա-
նական չըլլար ուրեմն կարծել թէ Սիրնեցի
ևս տեսած լլայ զայն և կարդացած
միտեղամայն, քանի որ այս նամակը՝ ըստ
ամենայն հաւանականութեան՝ իր կանուխի
գրածներէն մին պէտք է համարիլ, այսինքն
Կ. Պոլիս երթալէ առաջ, և թերեւս այս
նիւթերուն օտար բան մը չէր ըստ ինքեան
այն վէճի նիւթն ալ, որու համար Սոկրատի
հետ ընդհարում ունեցաւ Սիրնեցին :

Իբրեւ վերջին պարագայ, կը հարցնէ
Սիրնեցի թէ ինչո՞ւ զմեզ կը մեղադրէք
Առաջաւորի Պահք ունենալու համար :
Կարդացէ՛ք, կ'ըսէ, Ս. Լուսաւորչի զը-
րածները, ու պիտի տեսնէք որ այն օրերն
են մեր լուսաւորութեան առաջին օրերը,
որովհետեւ, երբ Ս. Գրիգոր վիրապէն և
լաւ, ամբողջ աշխարհը զիւամոլեալ գտաւ,
և շատ մարդիկ անոր ոտքն իյնալով կու-
լային. մինչեւ անգամ Ս. Գրիգոր իսկ
յարտասուեալ փրձկեցաւ և հինգ օր ամբողջ
պահեց թաղաւորին հետ միասին, և ար-
կէջ վերջն էր որ սիսու քարոզութիւններն
ընել : Ահա այդ օրերուն յիշատակն է որ,
կ'ըսէ, մենք պահեցինք ու մինչեւ հիմա
կը պահենք :

Այոպէս՝ պահ մը ընդունելով որ Սի-
րնեցին լլայ հեղինակը այս թղթին՝ կը
տեսնենք որ գրեթէ ամէն տողի մէջ նո-
խանձախնդիր ոգի մը ջոյց կուտայ Հայ
եկեղեցիի վարդապետութիւններուն և օս-
նախմբութեանց վերաբերմամբ :

Իրա՛ւ է որ՝ տեղ տեղ կը հանդպինք
ինչ ինչ աննշան վրովանքներու և նախա-
պաշարութեանքու : Բայց ատոնք մեծ պատու
ճառ մը չեն կրնար ըլլալ որ անիկա իյ-
նայ իր դիրքէն, այսինքն զադրի Հայ Ե-
կեղեցիի ջերմ պաշտպան մ'ըլլալէ : այլ
այդ բաները կրնանք վերադրել իր ընդու-
նած չափաւոր կրթութեանը :

Գտնով լեզուին, ըստ բաւականին պարզ
է և յստակ, և չունի այն խրթնութեան
թիւնները որոնց շատ անգամ կը հանդի-
պինք հեղինակին այն դրուածքներուն մէջ՝
զօրք յօրինած է յունարէնի ազդեցութեանը
կրելէ յետոյ :

(*) Ներդրող յօդուածը Տես 14-րդ թիւը :

Բայց թէ ատուղիւ Սիւնեցիին է հեղինակը այս թուղթին, այդ մասին թեր ուշ է մտաւորկութիւններ կարելի է յարուշանել: Նախ կրնայ ատարկուիլ թէ ինչո՞ւ իր միւս գրութեանցէն մէջ հետքն անգամ չկայ այսօրինակ աւանդական գրոյցներու և նախապաշարութիւններու՝ որոնց վրայ խորքին մէջ, այս հարցումին կրնայ պատահականուիլ թէ այս թուղթը շատ կանուխ ժամանակի մէջ, այսինքն իր երկրաստորգութեան ասեմ գրած ըլլալուն՝ բնական էր որ իր առած կրթութեան բերմամբ, ինչ ինչ բաներ՝ որոնց պիտի չուզէր տալ ըրներ վերջը հաւատք ընծայել՝ ընդունած է. և ատուղիւ Սիւնեցիին բոլոր դրաւոր աշխատութիւնները ամէն ժամանակի համար ընդհանուր գաղափարներով միշտ միեւնոյն անձը կը ներկայացնեն մեզ իր Եկեղեցիին հանդէպ:

Բաց աստի՝ մի քանի պարագաներ ալ կան որոնք բաւական հիմնաւոր ապացոյցներ կրնան համարուիլ հերքելու համար Սիւնեցիին այս թուղթին հեղինակ ըլլալը: Այսպէս Սիւնեցի իր գրութեան ընթացքին մէջ կը մեղադրէ Յոյները՝ ներքինի մարդերը քահանայ և Պատրիարք ընկենուն համար՝ սակայն այս մեղադրանքը չի կրնար անշուշտ ակնարկութիւն մը եղած ըլլալ Գերմանոս Պատրիարքին նկատմամբ՝ որ ներքինի էր, քանի որ Սիւնեցիի այս թուղթը գրուած պիտի համարինք զեւ Բիւզանդիոն չղացած, որ ասուն տակաւին Պատրիարք չէր Գերմանոս. միւս կողմանէ Գերմանոսէ առաջ գոնէ մեզի ծանօթ չէ այնպիսի մէկը որ ներքինի ըլլալով պատրիարքական գահուն վրայ բարձրացած ըլլայ: Իրաւ է որ Սոկրատ իր պատմութեան մէջ կը յիշատակէ Ղեւոնդիոս և պիսկոպոս Անտիօքայ, որ կնոջ մը հետ կենակցութիւն հաստատած ըլլալուն պատճառովը՝ իր շուրջը յարուցուած կասկածները ցրուելու համար ինքզինքը ներքինացուցած էր՝ տակաւին երէց մ'ըլլալով, և յետոյ Անտիօքայ հայրապետ եղած: Սակայն մէկ երկու ցանցաւ երեսոյթներ չէին կրնար այդքան ծանրակշիւ հանգամանք մը

տալ խնդրոյն՝ որ դայթակեցուցիչ իրողութիւն մը դարձած ըլլայ, ամէն կողմէ աչքի դարձելու տգեղութեամբ: Մենք զիտենք թէ Գերմանոսէ վերջն է որ յընթացս պատմութեան բաղմամբիւ ներքինիներ կ, Պոլսոյ աթոռին վրայ բարձրացան, այսպէս Իգնատիոս Պատրիարք (846—857) զոր ներքինացնել տուած էր Լեւոն Հայկազն երբ զեւ տղայ էր նա: Նիկիոս (765—780) Սլաւ չնդէ, որ շիտակ կարգաւ անգամ չէր զիտեր, և պապտին կանանոցի խեղկատակն ու պնակալէզն էր երբեմն, և երէց Ս. Առաքելոց եկեղեցոյն: Ստեփանոս Բ. (925—928), Թէոփիլաքոս (933—936) Պողիքոս (936—971) ևւն, ևւն:

Ի հարկէ Սիւնեցի չէր կրնար ակնարկած ըլլալ այս անձերուն՝ որոնք իր ժամանակէն շատ վերջը ապրած են: Գարձեալ Սիւնեցի այնպէս մը կը նկատէ որ իբր թէ Նիկիոյ ժողովը կանոնական արգելք մը դրած ըլլալ ի ծնէ ներքինի եղբայրները կրօնաւոր չընելու, մինչդեռ այդ արգելքը ինքզինքնին ներքինացողներու համար էր:

Այս թուղթին՝ Սիւնեցիին չլլալուն իբր աղացոյց կրնայ ծառայել նաև իր կենսագիր պատմիչին՝ Օրբէլեանի՝ անոր անունովը զայն չյիշատակելը:

Սակայն և այնպէս, ո՞վ ալ ըլլայ հեղինակը այս թուղթին՝ մենք այնպէս կը նկատենք թէ նա տահապին դատարարութեամբ սնած միտք մըն է, հմուտ և կեղեցական ուսմանց, որ իբր Հայ Եկեղեցիի վաւակ, նուիրական պարտք մը համարած է իրեն պաշտարան կանգնել իր Եկեղեցիին:

Գալով մեր պատմութեան ընթացքին՝ Ստեփանոսի վարժապետը՝ Մովսէս՝ որ մեծ համարում ունէր անոր վրայ՝ դեռ չվախճանած անոր յանձնեց եպիսկոպոսարանին հոգաբարձութիւնը: Եւ երբ իր մահուանէն վերջը Սիւնեցիք ընտրեցին Անանիա անուն մէկը, Ստեփանոս անձամբ տարաւ զԱնանիա օրուան կաթողիկոսին (Եղիա) և և պիսկոպոս ձեռնադրել տալով զրկեց ի Սիւնիս: Եւ ինք մնաց Եղիա կաթողիկոսին մօտ, ու սկսաւ առանձին աշխատութիւններով զբաղիլ:

Դեռ չեկած այն վիճաբանութեան՝ որ վճռական ազդեցութիւն մ'ունեցաւ Սիւնեցւոյն կեանքին վրայ, եւ որ տեղի ունեցաւ Սիւնեցիին եւ Սմբատ ասպետ Բիւրատեանի միջեւ՝ աւելորդ չենք համարիր հոս համառոտակի ներկայացնել այն կրթութիւնը զոր ունեցաւ Սիւնեաց զարդը Հայ մաթիմ համար, թէ ո՛ր աստիճան կարող անձեր ընծայած է նոր բազմին, եւ թէ ի՛նչ հանգու մանք ունէր կրթութիւնը այդ զարդին եւ ի՛նչ ճիւղերու տակէր զարկ մը, մղում կը տրուէր հոն:

Սիւնեաց վարդապետարանը, որուն հիմը Օրբէլեան կ'ուզէ հանել մինչեւ ի սկիզբն հայ դպրութեան կամ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ օրերը՝ կրնանք բնել թէ զոտ տաճարին կրթութիւն մը կուտար ամէն անոնց որոնք իրեն կ'աշակերտէին: Սիւնեցիք մասնաւորապէս յատուցուեալ եղան եկեղեցական ուսմանց, իմաստասիրութեան կամ դպրութեան մէջ: Այստեքին ուսմանց ալ՝ մասնաւորապէս յունարէն լեզուի՝ նըշանակութիւն կը տրուէր եւ պակաս չէին նոյն լեզուին հմուտ անձեր: Այս պարտզան կը հաստատուի Օրբէլեանի սա առդերով. «Եւ էր յայնմ ժամանակի Հայաստանի դպրութիւնքս նորոգ եւ չէն եւ յոյն լեզուի եւ դպրութեան յոյժ հմուտք եւ տեղեակք, երբ կը խօսի Ալբանոմ կաթողիկոսի ժամանակին վրայ, որ ատեն Քաղկեդոնական խնդրի վերաբերութեամբ բնութանցի վիճաբանութիւններ տեղի կ'ունեանային Հայերուն եւ Յոյներուն միջեւ:

Սիւնեաց զարդի նշանաւոր ներկայացուցիչներն են Սահակէն եւ Մեսրոպէն ետքը՝ Անանիա կաթողիկոս որ մեծ աստար հանդիսացաւ Մեսրոպայ: Դար մը վերջը նշանաւոր հանդիսացաւ գրչութեամբ Պետրոս կաթողիկոս՝ մականուանեալն քերթող, որուն համար կ'ըսուի թէ աշակերտած ըլլայ Մովսէս քերթողահօր:

ՆԱԽԵՆ Վ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Շարունակելի)

ԱՐԵՒԻՆ ԴԵՄ

Զենիքին վրայ, միջօրեի
Լրման արեւն է որ կ'այրի,
Այրուցին պէս արփաւայրի՝
Ուր սիրոյ հուրք կը վառի...

Հոն բարձրութեանց մէջ երբեք
Արձուի խոյանք մը կ'երկարի,
Տեղեւորս պէս բո՛ւն, ամեհի՝
Որոնց կարմիր քեւեր տուի...

Ու հոս երեսն ի վար երկրի
Լըռիկ՝ բսուեր մը կը սահի,
Արագ, կեանքիս պէս դրժայրքի՝
Որ արեւին հետ կը մարի...

Կեցի՛ր, արեւ, անգուր արեւ,
Կեցի՛ր, վառուէ՛ գրիտուս վերեւ,
Ու շարաւուք ստուերն իմ սեւ
Թող կրճկուի՛ ոսկիս ներքեւ,

Մինչեւ քամի մը ուրեւ ալ բաժկին՝
Որ դառնութեան ի՛մա է բաժին,
Մինչեւ Յոյսի ճողլը լեւիս
Ընդերքմարեմ շողիւղ ետին...

Այն ասեմ, ա՛հ, ես կը կանխե՛մ
Մայրամուսքը կեանքիս դրժիւմ,
Ու հանդերձեալ կեայիս՝ վըսեմ
Թաւալումներդ կը դիտեմ...

Պաշտ

ԱՐՏԱԽԱՉԻ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳՐԱԹՕՍԱԿԱՆ

ԱՄԻՍ ՄԸ Ի ԿԻԼԿԻԱ, գրեյ Տիկ. Ար-
շակունի Թեոդիկ, Տպագր. Վ. եւ Հ. Տէր
Ներսէսեան, Կ. Պոլիս, 1910

Կարմիր դաշտերու մէջ եղբայրական
օգնութեան վեհ տառաքինութիւնը լաջաւ
կոյս յիշատակներ. մենք կը սպասենք տը-
խուր օրերու. ու այն ատեն մտքերը կը
լարուին, զգալմունքը կը փոթորկի ու զը-

րիչը մեր մատուցներուն մէջ կը զտղզղայ :

Ատանայի ջարդը կարմիր յուշեր արծա-
նազրեց հայ նահատակներու գրքին մէջ .
կան վշտահար սրտեր որ վշտերով կը մխի-
թարուին . Հայը այդ վշտահար սրտերէն է :

Մեծ գութագրանքով կը կարդանք գրքե-
րը ուր գրուած է մեր մարտիրոսացումի
պատմութիւնը : Գութագրանքի այդ գրքե-
րէն է Տիկին Արշակունի Թէոդիկի ԱՄԻՍ
ՄԸ Ի Կիլիկիա վշտակիր գիրքը :

Վայնասունը կը պոթիկայ Կիլիկիան
նահատակներու զաշտէն . Կին զրոյ Արշա-
կունի կ'ուղեւորի դէպ ի հայ մարտիրոսնե-
րու երկիրը : Երբեմն նկարիչի գրչով իր
ուղեւորութիւնը կ'արձանագրէ : Չոր պատ-
մութիւն մը չուզեր ընել . երբեմն քնտրով
երբեմն գրչով կը պատմէ տեսածները :

Յուշիկներու փունջեր համարուած են
իր հատորին մէջ , իր պատկերները ունին
այլազան տպագրութիւններ . գրիչը կը
շարժէ , և առանց նկարիչ մ'ըլլալու երա-
զանքն զգալու , համեստ ու փափուկ նը-
կարներ կը պատկերէ . իր «Ազօթ»-ը փոքր
նկար մըն է . թուրքին աղօթքը կ'ուրուա-
գրէ սա խորհրդապաշտութեամբ . — «Նաւուն
հանդիպակաց կամրջակին վրայ տեսակ մը
անօրինակ խլրտում դէպ իբն կը ձգէ
նայուածքս : Բացօթեայ տախտակ սարա-
ւանդին վերեւ խռնում մը կայ մարդկային
մարմիններու՝ որոնք խմբովին և համա-
չափ կերպով կը հակին ու կը բարձրանան
փոխիփոխ : Հաճի զացող Պուխտրայինե-
րու խումբ մըն է որ ծնրադիր ու գետնա-
մած՝ երկնոյն ազօթքը կ'ընէ իր Սլա-
հին , լուռ ու պատկառոտ : Հայեցողի ինչ
վերացում անձնիւր դէմքի վրայ : Կրօնքի
ինչ ջերմեանդ արշաւանք անոնց բովան-
դակ կերպարանքին վրայ : Գլուխներ
վեհերոտ ու երկիւղած կը ծռին , ճա-
կատներ մինչև տախտակամած կը քսուին ,
սրտեւանունքներ ծանր՝ խորհուրդի խառ-
ցումներ կը պարփակեն , և չուրթեր՝ պահ
մը տարամբժ ամէն սուտի ու կեղտի՝
զովքի և օրհնութեան ծորակներ են դար-
ձած : Մինչ նաւը կ'առաջանայ յուշիկ ,
մինչ ճեղքուող ջուրեր իրենց մեզմ ու մի-
օշինակ երաժշտութիւնը կը մրմնջեն , հոն ,

վերք , զորչ ստուերներուն մէջ պարու-
ռած , կրօնքի այդ մարդերը սիրտերնուն
իզձերը կը վերուղղեն , հոգեյունչ փառա-
բանութիւննին կը ձօնեն իրենց պաշտելի
Ալլահին :

Այդ նկարին վրայ թող մտածէ ընթեր-
ցողը . թուրքը տոտուածապաշտ է , բայց
չի գիտեր որ ինչ որ Աստուած է տուած ,
ինք իրաւունք չունի դայն յափշտակելու .
կեանքը Ալլահին պարգևն է , կեանքերը
Ալլահին ինչքերն են , և սակայն թուրքը
այդ ինչքերը Ալլահէն կը յափշտակէ ջադ-
ղերու դաշտին վրայ : Ասոր վրայ մը-
տածե՞ր են թուրքին մոլեռանդ իմամները :

Թուրք տխմարներուն չափ նողկալի է
Եւրոպայի անտարբերութիւնը : Գիտեն ըն-
թերցողները որ Թրանսային իր մարտանո-
ւերը իոկոյն ջարդերու ծովեզրը հասցուց :
Ի՞նչ ըրին անոնք : Արշակունի Թէոդիկ կը
պատասխանէ .

«Փաղաքակիրթ սչխորհներէ ուղար-
կուած երկաթէ այդ հզօր ոչնչութիւնները
հետերնին բերած էին մարդեր որոնք
պաշտօնն ունէին օրն ի րուն՝ զխաակներ
աչքերնուն , ծովախորշին մէջ ծփը-
փուն հէզ հայ զխաակներ լուսանկարելու ,
խակ դիշերը , ներսն ելեկտրական ջահերու
լոյսով՝ աշխարհիկ վարկապաղի ցնծու-
թեանց անձնատուր ըլլալու : անհող , ան-
տարբեր , առանց մաղի չափ փոյթ ընելու
թէ անդին , ո՛հ , անդին , գնդակներ
կ'անձրեւէին անդադար , սուրեր կը շողա-
յին աջ ու ձախ . ու Հայու արիւնն էր որ
կը հոսէր , ու կրակն էր որ կը լսուէր
ամենածախ : Ու խորհիլ թէ այդ ամէնը
պիտի դադրէին , պիտի մարէին՝ եթէ վը-
րահապատ այդ պատկառելի զանգուածնե-
րէն նաւազներ սուրերնին գնէին ցամաք ,
իրենց պետերուն հրամանովը սպառնա-
դէտ : »

Եւ չըրին . վառն զի ելլոյրական օգ-
նութենէ չատ վեր էր վաւառտ պարա-
հանդէսը : Լրբութեան էն գերապանծ օ-
րինակը ցոյց տուաւ Եւրոպային՝ իր նոյն
օրուան հանդիսատեսի անդթութեամբը :

Արշակունի Թէոդիկ արկածեալ Ատու-

նայի մէջ կատարուած խժովութեանց պատմութիւնը արձանագրելով հեղինակաւոր գրչով՝ կը համոզէ որ զմեզ ջարդողները ցեղերու մէջ ունին բնորոշ յատկութիւն մը — ջարդելու անզուգական յատկութիւն։ Յեղերու պատմութեան մէջ զմեզ ջարդող ազգը պիտի պարծի իր հեղինակաւոր քաղաքարտութեամբ։ մեր ոչխարի բնուորութիւնը այդ ցեղը կրթեց էն լիւրս զիւցազնութեան մէջ։

Հեղինակը մի առ մի կը բանայ սրտաճմլիկ տեսարանները, և դու կը համոզուի որ Աստանան իր դաշտերով, գետերով, անտառներով Թուրքիոյ ամենէն թշուառ գերեզմանն է, որուն վրայ հայ ծերացած ջլառ տառապանքը կարգաց իր համբերութեամբ Աւետարանը, ու մեր համբերութեամբ օրհնուեցան, օծուեցան հայ մուկները։ Ու մեր համբերութենէն չօգտուեցաւ ջարդող ցեղը, մեր վերքերուն մէջ կասկածը թոյն թափեց, և այդ քաղաքականութիւնն չէր...

Արշակունի Թէոդիկ իւր նկարագրող գրիչ արձանագրած է իր լսածները և տեսածները, բանաստեղծական կամ բանասիրական զարդով կամ պիտութեամբ ծանրաբեռնուած չէ իր հատորը։

Իր պատմութեանց մէջ նշմարելի է լքումի հոգին, մայր մըն է որ կը պատմէ, զիականերու զաշտին վրայ կեցած մօր մը զուրպուր սրտաշարժ լեզուով մանրամասն կը պատմէ արկածեալ Աստանայի արիւնի ու կրակի դէպքերը։

Երևակայութեան պաճուճանքի դիմած չէ՝ դրականօրէն կ'արձանագրէ իր պիտեցածը։ Կարմիր ճշմարտութեանց վերայադրութիւնները փնջած է։

ԱՏՈՒՆՆԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շար. նախորդ թիւէն)

Հայրապետին այս անյողողող կամքը գովելի արդիւնքներ ունեցաւ, վասնզի այդ կերպով բոլոր վարժարաններու մէջ սկսաւ

պարտաւորիչ ըլլալ ձայնագրութեան ուսումը։ Ասկէ վառ զպիւրներու քմահաճոյքին չափ մը դրուեցաւ, ըստ որում ներքին չէր տարւած ձայնագրեալ չարականէն տարբեր եղանակով երգել, որով միօրինակութիւն մտաւ Ռուսահայոց եկեղեցիներուն մէջ, բայց թէ՛ իւր օրինակ մեզ տրուած այդ չարական օրհնէ՞ր իր մէջ պահանջուած բարեկարգութիւնը, զայդ կը թողունք մասնագէտ երաժիշտներու զառաստանին։

Գէորգ Դ. կաթողիկոս փափաքելով որ մայրաքաղաքիս եկեղեցեաց մէջ ևս իր ձայնագրել տուած Շարականին համեմատ միօրինակութեամբ կատարուին երգեցողութիւնք, (*) քանի մ'օրինակ զրկած էր անոնցմէ, սակայն յուսացուած ընդունելութիւնը չկրցաւ զոնել հոս, չատեր սկսան ստարկել թէ մասնաւոր քմահաճութեամբ կատարուած այդ գործը սխալօր հանդիսանալու հանդամանքը չունի։

Մասնաւորապէս կը հակառակէր նաեւ Արիստակէս Յովհաննէսեան՝ իր հին յանկերգը կրկնելով թէ Շարականները ոտահաւոր են, հետեւաբար պէտք է անոնց եղանակներն ալ մէկ չափի վրայ ըլլան։ Արդարեւ մեզ դաս տրուած Շարականներուն մէջ արժանի է յիշատակել Ս. Յակոբայ օրհնութիւնը՝ «Յաղթող և սուրբ հայրապետը, որուն լոյսը տուններն ալ՝ միւսեայն չափին վրայ ձայնագրեալ՝ երգեկաւոր մեզ ամբողջ պարբերութիւններովը։ Լաւ կը յիշեմ որ մեր տղաւորութեան ատեն Սրբոյ Հրեշտակապետաց տօնը կը

(*) Ասելովը չենք համարիր յայտարարել թէ ներգայիս մէջ այնքան տիրապետած է երգեցողութեանց ալլալութիւնը, որ ո'չ միայն տարբեր եկեղեցեաց մէջ՝ այլ նոյն իսկ մէկ եկեղեցեաց չըջապատին մէջ կարելի չէ լսել միօրինակ երգեցողութիւն, ո'ւր մնաց ամբողջ եկեղեցիները միօրինակութեան վերածել։ Իրաւ է թէ այդ նպատակով վերջին ատեններն ալ քանիցս Յանձնաժողովներ կազմուեցան Մանկունի սրբաղանի նախողգահութեան ներքեւ, չայց անկարելի եղաւ փափաքուած արդիւնքը ձեռք ձգել։

կատարուէր Մայր վարժարանի յարակից գաւթին մէջ՝ որ Գաբշիէլ հրեշտակապետի անուան նուիրեալ էր, և իր ածնախմբութեանն առթիւ Ս. Պատարագ կը մատուցուէր տարին անգամ մը, ինչպէս նաև ուրբաթ երեկոյեան նախասոճեակին ալ հոն կը կատարուէր (Ս. Սաչ եկեղեցւոյ և Մայր վարժարանի մէջոտելի գաւթիք, ուր խորան մը և դպրաց յատկացեալ տեղեր կային)։ Նոյն օրուան ամբողջ շարականները «Որ յանէից» օրհնութիւնէն սկսեալ մինչև «Երկնաւոր հօտ ընտրեալ» Ստեղի Մանկունքը ձայնագրեալ կ'երգէինք 30 աղայոց ձայնակցութեամբ ի մեծ զոհունակութիւն ժողովրդեան, որ խուսն բազմութեամբ ունկնդրել կուգար այդ տօնին յատուկ շարականներու իրարմէ գերազանց եղանակները։

Եթէ երբէք յառաջիկային բարեբախտ ըլլանք ձայնագրութեան տարազը. խաղերով օժտել մեր տղարանները, (ինչպէս ըրաւ Տ. Գեորգ Դ. ի Վաղարշապատ), շատ մը օրինակներ կրնանք մէջ բերել Արիստակէս Յովհաննէսեանի վերայիշեալ աշխատութիւններէն՝ ինչպէս նաև Հայերէն և Տաճկ. երգերէն, որոնցմէ յիշատակութեան արժանի են հետեւեալները. — Եւ յարկս պերճ ընդ, Ում ի նուէր, Շնորհաց աղբիւր, Առաւելան զոյգ, Օն արիք հաւատով, Բարձրացո՛՛ Տէր, Տունն Յամանեան, Կեչէ՛ մեր քաջ, Համա ու Սէնա, Է՛յ սէրվէրի, Դուտումըն վիրտի, Տիտէյի տիւնեա, Խիւտայի էվէիյ ելն։

Հայերէն երգերու մեծագոյն մասը՝ որոնք վարժարանաց մրցանակաբաշխութեան առթիւ երկատիրուած են, կը պատկանին Յովսէփ Մալէզեանի (1804—1884), որ երկար տարիներ պաշտօնավարած է ի Մայր վարժարան՝ իրը Հայկաբանութեան դասատու։ Իսկ Տաճկերէններն որոնք ձօնուած են Թուրքիոյ գահակալին, Հէրէթիկ Հօնայի (Ռեթէոս Գրիգորեան, 1819—1904) հեղինակութիւններն են։

Գալով եկեղեցական մասին՝ բողոքական են իր յօրինած «Ամէն հայր սուրբ»ներն ու «Տէր ողորմեա»ները՝ զանազան եղանակով։ Մինչև այն ատեն Ութ կանոնագր-

ւութիւններ լսողովին աշաւազեալ կերպով կ'երգուէին. այնպէս որ բձ. կանոնագրութիւն «Ի քեզ տէր քլեացայն» որ ըստ օրինի պէտք է Հիւսէյնի եղանակով կարգացուի, Հիճազի ընթացքով կ'երգուէր, (թէ և հիմա ալ պակաս չեն հին դրութեան վրայ երգող յամառ կամապաշտներ), որով իրմէ ետքը եկող «Հրեշտակային ձայնի» Հանգստեան Շարականին երբէք չէր հաւ մատառասխաներ։ Այս աններելի պակասութիւններն իր մասնաւոր ուշադրութեան առարկայ ընելով՝ բոլոր կանոնագրութիւններն ալ իրենց բուն ձայներուն վերածնց, որոնց շնորհիւ այլեւ չենք հարկադրուիր Բաստ եղանակով կարդալ դձ. «Օրհնեա անձն իմ զոէր»ը, մինչդեռ իր բուն ձայնին համեմատ՝ պէտք է Սվահան եղանակի ընթացքով կարդացուի։

Յիշատակութեան արժանի է նաև Յարութեան «Տէր յերկնից»ներէն՝ Փառաւանակից, Ահաղին ձայնիւ, Տեսիլ փայտակնաձև Շարականները թափօրի յատուկ ծանր եղանակներու փոխակերպելը։ Յարութեան Տաղերէն՝ Մարիամ Մազդազներին և Յարեա Բրիստոսը՝ որ թէ՛ Յունական Սապա եղանակաւ և թէ՛ Արեւելեան Հիճազ եղանակաւ հեղինակած է, Իւր զլուս զործոցներէն մին կը համարուի նաև «Խնկեցին ի յիւս արիւնոյն» առաւօտեան մաղթանքը, որուն ձայնագրեալ մէկ օրինակը մինչև ցարկ կը պահուի Մայր եկեղեցւոյ յարակից ուսումնարանին մէջ։

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԲՁ. ՀԻՍՏԱՐԵԱՆ

(Շարունակելի)

ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ

ՍԻՄՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ (*)

Ե.

Կիրակի առաւօտ Պետրաս և Տէր Վարդան զնացին ճեմել հանրային պարտէզը զոր առանց անպատահութեան կա-

(*) Շարունակութիւն Գալստղ քիւնն։

րելի է անուանել և «մենային» պարտէզ։ Պտոյտէ վերջ նստեցան ծառի մը տակ, սրուակով օղին ստջլանին։ Պետրոս կամայ կամայ սկսաւ խօսիլ իր ամուսնութեան խնդրին վրայ։ յայտնեց իր և Սուրբիկի փոխադարձ սէրը, բացատրեց զժուարտութիւններն որոց կ'սպասէր մօրը կողմէն։ Տէրութեւր ուշադիր մտիկ բրաւ, ըմբռնեց կացութիւնը, միասին խորհեցան այն միջոցներուն վրայ որոյնով կարելի պիտի ըլլար համոզել Շաղիկ տուտուն։

Վերադարձան տուն, սիրահարը յուսաւ լիր, տէրութեւր մտախոհ։ Այժմ որ այլ եւս գործնական միջոցներու կը դիմէր՝ իր ամուսնութեան իրր նախնական պատրաստութիւն, Պետրոս չէր ուզեր զաղտնի պահել եղբորմէն իր սէրն ու խորհուրդները։ Այդ ամուսնական գործը նոյն չափաթիւ իրենց ընտանեկան զբաղումը պիտի ըլլար։ Ստեփանիկի սիրտը դառնապէս պիտի վիրաւորուէր խնամալով թէ եղբայրն իր սիրտը քօղածածուկ կը պահէր իրմէն՝ իբր օտարէ մը։ Ճաշէն վերջ Պետրոս և լիօրն ըսաւ երթալ պարտէզն ու սուրճը հոն խըմել։ Գնացին նստան ծառի մը տակ, լուռ էին, երկուքն ալ խորին մտածութեան մէջ։ Երբ սկսան սուրճ խմել Պետրոս այն ինչ բերանը կը բանար հաղորդելու համար իր զաղտնիքն, Ստեփանիկ ըսաւ.

— Պետրոս, բան մը ըսեմ, բայց մի՛ խնդար. կարգուիլ կ'ուզեմ։

— Ի՞րաւ, ըսաւ Պետրոս ծիծաղելով։ Ի՞նչ աղէկ բան, բայց քիչ մը կանուխ է։

— Ինչո՞ւ կանուխ ըլլայ, և միթէ որչափ կանուխ կարգուինք այնչափ լաւ չըլլա՞ր, մանաւանդ իմ առողջութեան համար։

— Պայծառ-գիւղի բանաստեղծական երկինքի ներշնչումներո՞ւն պարտական ենք այդ սիրա-բժշկական դիտութիւնդ, ըսաւ Պետրոս հեզմական սիրալիր ծիծաղով։

— Սեպէ թէ, չե՞ս հարցներ աղջիկը,

— Ի՞նչ, աղջիկն ալ որոշած ես։

— Եւ խենդի պէս ալ կը սիրեմ։

— Ստոյգ, ան ալ զքե՞զ։

— Յիմարարար։

Պետրոս աւելի ծիծաղկոտ գէմքով, տակի հեզնօրէն կը խօսէր։

— Գաղտնի՞ք է սիրուհիիդ անունը։

— Բեզմէ գաղտնիք կ'ըլլա՞յ։

— Ո՞վ է ուրեմն այդ չքնաղաղեղ մահկանացուն կամ հարսնցուն։

— Մի՛ ծաղրեր զիս, կը նեղանամ։

— Փութա՛ ուրեմն։

— Նրանիկ։

— Ո՞ր երանիկը։

— Բանի՛ Երանիկ կայ, Գույումճեանը։

— Իրա՞ւ։

Պետրոս լռեց, սիրտն ալսայլած։ Ստեփանիկ ոչինչ նշմարելու կարող էր, եղբօրը լռութենէն քաջադերուած սկսաւ պերճախօսել։

— Ի՞նչ աղնիւ աղջիկ, անանկ չէ՞, Պետրոս, ընտանիքն աղնիւ, պարկեշտ, աշխատասէր, ստակ չունին եղեր, ի՞նչ ընեմ. երջանկութիւնը ստակի մէջ չէ։ Գուն հաւանութիւնդ կուտաս, և կնքահար, ալ կ'ըլլաս. ատոր տարակոյս չունիմ. հիմա մարերնիս համոզելու է. տէրութեւր ալ աղէկ աստիճին եկաւ. Առտուած խրկեց. միայնք, Լճեցուցէք եւ շատ զիւանազիտութիւն չեմ կրնար ընել. սիրտս քեզի բացի, ա՛լ դուն զիտես, կեանքս ձէռքդ է։

Պետրոս շուարած կը մնար, ինքն իրեն համար մտաւանջութեան մէջ, և տաւ եղբայրն ալ կուգար խնդրել իր աջակցութիւնը։ Եւ յետոյ միտքն ինկաւ թէ երկու եղբայր չեն կարող կարգուիլ երկու քրոջ հետ։ Այս սպաւորութիւններու ներքեւ չկրցաւ անմիջական որոշում մը տալ. ուզեց ժամանակ շահիլ.

— Մտածենք, ըսաւ, կը նայինք։

— Աման, ի՞նչ կ'ըսես, ի՞նչ մտածենք, Պետրոս, չըլլայ թէ ատանկ բառ մը բերնէդ հանես։ Եթէ Երանիկի հետ չամուսնանամ, կը տեսնե՞ս սա պարտէզին ետեւի գերեզմանատունը, զիս հոն կը թողուք ու կ'երթաք։

— Լուէ՛, լուէ՛, խենդ խօսքեր մի՛ ընեք, ինձի ձգէ։

Եւ մեկնեցան զնային տուն։ Գույումճեաններն իրենց եկած էին, միասին պըտրտել երթալու։ Պետրոս չուզեց ընկերու նալ. ինք ուրիշ տեղ պիտի երթար։ Երբ

անոնք դուրս ելան, մինակ մնալով Տէր Վարդանի հետ, ըստ սնոր:

— Տէր Հայր, երկու եղբայր կրնա՞ն երկու քոյր տունել:

— Ի՞նչ կ'ըսես, էջէնտիս, լսումք բան է:

— Ինչո՞ւ չըլլար, Տէր Հայր, ի՞նչ կայ որ, արիւն չկայ մէջերնին, ազգակա՞նութիւն չկայ:

— Օրհնած, ես գիտեմ ինչո՞ւ չըլլար. օրէնքը շինողը մենք չենք: Շխտակը ըսելով մեր եկեղեցական օրէնքներու մէջ խել մը ամուսնական արգելքներ կան, որոնց զրուկուն պատճառը չենք գիտեր. բայց օրէնքը շինողը մենք չենք. մենք կը զործադրենք միայն, ինչո՞ւ կը հարցնես:

Ոչինչ: Միայն խնդրեմ, Տէր Հայր, առտունը քսածիս համար մօրս զեռ խօսք մի՛ բանոր, մինչեւ որ քեզ հետ անգամ մըն ալ խօսինք:

— Շատ աղէկ. բայց ի՞նչ կայ որ:

— Բան մը չկայ. քիչ մը մտածելիք ունիմ:

— Շատ աղէկ, ինչպէս կ'ուզես այնպէս ըլլայ:

2.

Պետրոսի գլուխը կրակի մէջ էր, մարմինն ու հոգին խոնջ. բամբուկով տէր Վարդանէն ծովեզր իջաւ, վարձեց քայլք մը գէպի Պէօյիւքտէրէ երթեկեկելու:

Զովադա. երեկոյեան օդը, հանդարտ ծովը, ցրուեցին յոգնութիւնը. ընկողմա՞ն նստ նստակին մէջ՝ խորին մտածութիւններէ պաշարուած էր: Ի՞նչ պէտք էր ընել. պահանջը՞ կը քորմէն ետ կենայ. այդ գիւրին էր. եղբայրն իրեն տեղի կուտար. խեղճ սղան կրնա՞ր ամուսնանալ, տուն տեղ ըլլալ առանց իր աջակցութեան. ի՞նչ բանի կրնար ծառայել անոր մի քանի սակի ամսականը: Բայց ներկի՞ էր իրեն օգտուիլ եղբորը խեղճ վիճակէն:

Եւ յետոյ, առանց այդ նիւթական խնդրին, միթէ եղբայրն յօժարակամ չը՞ պիտի զոհուէր իր երջանկութեանը համար: Կրնա՞ր ուրեմն այդ զոհողութիւնը ինք զլանալ:

Եւ ինչպէ՞ս զլանալ: Իր սէրն, իր հոգին էր եղբայրը. մատաղ մանկութեան օրէն ի վեր լուրս գորգուրանքը եղբորը նուիրած էր: Կաւ կը ճանչնար Ստեփանիկը. անոր զիւրաւառ սիրտը, փափուկ զղայումները, տկար կազմը. այդ ամենը իրեն երկիւզ կը ներշնչէին թէ արդարեւ եղբայրը չէր կրնար ապրիլ, եթէ չտուեա՞նանար սիրած աղջկանը հետ:

Որոշումը տուաւ. պիտի զոհուէր եղբորը:

Երբ տուն մտաւ, այնքան խոնջ և վատասկալակ էր որ չկրցաւ երկար նստիլ. քիչ մը ճաշեց և պառկեցաւ:

Յաջորդ իրիկունը շուկայէն կանուխ վերադարձաւ. Տէր Վարդան էմիրկէնի նաւամատոյցը նստած էր ծառերուն ներքեւ. Պետրոս անոր քովը գնաց. խօսեցան ասդիէն անդիէն. վերջը Պետրոս ըսաւ.

— Տէր Հայր, ինչպէս որ խնդրեցի եւրէկ իրիկուն, մօրս բան մի՛ ըսեր Սուրբիկի խնդրին վրայ: Գործը փոխուեցաւ:

Թէպէտ հետաքրքիր էր տէրտէրը, բայց հարցում մը չըրաւ:

— Ինչպէս որ կ'ուզես, սիրելիս:

— Եղբայրս Երանիկի հետ պիտի աւմուսնանայ. այս գործը խնդրեմ կարգադրէք:

— Շատ աղէկ, այդպէս թող ըլլայ:

Պետրոս ու Տէր Վարդան միասին կարգադրեցին ինչ որ պէտք էր ընել երկու մայրերու հաճութիւնն առնելու համար:

Նոյն գիշերը Պետրոս հետեւեալը գրեց Սուրբիկի.

«Տէր Վարդան մի քանի օրէն ձեր տունը պիտի դայ. բայց ներէ՛. քու ձեռքը խնդրելու համար չէ: Քոյրդ ու եղբայրըս իրար կը սիրեն: Կը ճանչնամ սիրտը, գիտեմ թէ պատրաստ ես զոհել սէրդ. քրոջդ երջանկութեանը: Միթէ նոյնը չէ՞ և իմ պարտականութիւնս, ու չկա՞յ զերազոյն հաճոյք մը այդ զոհողութեան մէջ: Երանիկի ու Ստեփանիկի սէրն անհնարին կ'ընեն մեր ամուսնութիւնը: Այլ գիտցի՛ր, Սուրբիկ, որ մինչեւ մահուանս բոլորին

սիրտս քուկդ է. և այդ բովէն շատ չու-
շանար:

«Մնաք բարով, Սուրբիկս, երջանիկ
և շիր— ինչ որ ինձ անհնար է:»

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

(Շարունակելի)

Ա Ղ Օ Թ Ք

ՊԵՐԳՆԻՆ՝ ՏԷՐ

Ըղձանգներու հաշիւն հոգւոյս կաթեցուր,
Տէ՛ր, յոյգերու կարօսն ունիմ սակաւին,
Սիրոյ բեկբեկ ճառագայթ մը սրտիս տուր
Որ յոյսերու անըջանք գէթ ապրիմ:

Բարիքներու շող ու շաղիք եմ ծառաւ,
Տէ՛ր, մի՛ գրկեր, տո՛ւր որ բնակեմ լիառաս,
Հոգիս՝ սիրոյս կապոյս պատանք դարձաւ
Կ'զգամ քե ալով իր ալովն մէջ է շնորհաս:

Տէ՛ր, պարգե՛ւէ, պարգեւէ՛ սերդ երկնային.
Դրբա՛ ղծբախտ այս վիճակիս մոլորուն.
Պարգեւէ՛ սերդ որ կարեմամ վերսին
Հասնիլ զհոյսն երջանկութեան մարգերուն:

Վաղորդայններ ես միշտ մնալ անցուցի
Բաղձանգներս խաւարի մէջ լուալով.
Լոյս չգայ, վերջալոյսներ սգացի,
Տէ՛ր, սիրոյ՛ք՝ զիս յոյսերուդ պարգեւով:

Ըղձանգներու հաշիւն հոգւոյս կաթեցուր,
Տէ՛ր, յոյգերու կարօսն ունիմ սակաւին.
Սիրոյ բեկբեկ ճառագայթ մը սրտիս տուր
Որ յոյգերու անըջանք գէթ ապրիմ:

Սկիւտար ՎԱՀԱՆ ԽԻԻՏԱՎԵՐՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ԶՕՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Ս. Պատրիարքն անցեալ շաբաթ տե-
տակցութիւն մ'ունեցաւ վարչապետ Հազգը
փաշայի հետ, որուն հինգ կարեւոր խն-

դիրներ ներկայացուց: Ասոնց առաջինն
էր Ատանայի բանտարկեալներու Յուլիս
10ի Ազգային Տօնին առթիւ ներման խն-
դիրը: Գոհութեամբ կ'արձանագրենք թէ ներ-
ման արժանացող Հայերու մէջ կը գտնուի
Տ. Մուշեղ Եպիսկ. Սերոբեան, պայմանաւ
տակայն որ Ատանա չդառնայ: Ս. Պատ-
րիարքը Վարչապետէն խնդրեց միեւնոյն
ատեն որ երկրին անդորրութեան պահպան-
ման համար վտանգաւոր կարգ մը ռճրա-
դործներ չարձակուին: Հազգը փաշա պա-
տասխանեց թէ ամէն պարագայի մէջ նը-
կատի առնուած է արձակուողներու զատա-
պարտութեանը և ռճրի աստիճանը: Երկ-
րորդ խնդիրն էր Ատանայի կարօտելոց հա-
մար քուէարկուած գումարին վճարումը:
Վարչապետը խոստացաւ շաբթուս մասնա-
վճար մ'ընել: Վերջին պահուն կը լսենք թէ
Պատրիարքայանը նոր և խիստ թաղրիր մը
ուզղած է Վարչապետին: Երրորդ խնդիրն էր
հողային հարցը, որուն ստիպողաբար կար-
գադրութիւնը պահանջեց Ս. Պատրիարքը:
Այս խնդրոյն վրայ հայ Մէպուսներ ևս
տեսակցութիւններ ունեցած են Վարչապե-
տին հետ, որ պատասխանած է թէ սկզ-
բունքով պիտի կարգադրուի գործը, ազ-
գին զոհացում տրուելու եղանակով, և թէ
Չարսանճագի խնդիրն ալ այդ կարգին մէջ
պիտի կարգադրուի: Չորրորդ խնդիրն էր
Լուցիգա անուն իսլամացած հայ աղջկան
մը խնդիրը, որուն կարգադրութիւնն ալ
խնդրեց Ս. Պատրիարքը, բացատրելով թէ
անիկա մանուկ հասակի մէջ իսլամացուած
էր, հետեւաբար զիտակցութիւն չունէր իր
վիճակէն, իսկ հիմա կը պնդէ թէ կ'ուզէ
հայ մնալ, ուստի պէտք է յարգուի
այս բաղձանքը: Վարչապետն հաւաստեց
թէ խզի վրայ բռնադատութիւն ի գործ
չպիտի դրուի, և խզի ազատութիւնը
պիտի յարգուի: Հինգերորդ խնդիրն էր
Նէտի-գուլէի ազարակին մահլիլ նկատ-
ուելու հարցը, մինչ ազարակին Երուսա-
ղէմի վանքին սեփականութիւնն ըլլալը
հաստատող բաղձաթիւ փաստեր կան:
Վարչապետը պատասխանեց թէ Պետական
Խորհրդոյ տուած որոշման տեղեկագիրն ի-
րեն չէ հասած տակաւին, բայց տեղեկու-

թիւն ունի այդ որոշումէն, և յանձնարարած է որ Պատրիարքութեանին չհաղորդուի ղեռ, զործին լուծման եղանակ մը գտնելու համար: Միւս կողմէ մինչև որ Օսմ. Խորհրդարանն ի նկատ տունէ պատրաստուած օրինակիւմը, այս կերպ կալուածներու վրայ զործողութիւն չպիտի կատարուի, որպէսզի մանչիլի խնդիր չծագի:

Յայտարարութիւն չկայ թէ Ս. Պատրիարք Հօր խնդրանքներուն առթիւ տրուած խոստումներն ի՞նչ զործնական ելքի յանգած են: Դիտցուածն այն է միայն որ անչափահաս տարիքի մէջ խաւանած հայ աղջիկը, որ կը պնդէր թէ Հայ կ'ուզէ մնալ, անցեալ օր Պատրիարքարանի կողմէ զրկուած Տ. Տրդատ քհնյ. ի յայտարարած է թէ ինք խաւանութիւնն բնադուծած է և այդ կրօնքին մէջ պիտի մընայ:

Թերթերու մէջ կը կարդանք թէ Ս. Պատրիարքը, յարաւերական զանազան խնդիրներու ընթացքէն դժգոհ, կ'ըսէ որ եթէ հողային խնդիրն ալ աղջինն աննպաստ ուղղութիւն մ'առնայ, իր սրտածնաւորութիւնն աւելորդ է այլ եւս և կը մնայ իրեն՝ քաշուիլ պաշտօնէն, ինչ որ մտադրած է արդէն, որովհետեւ խոստումները չեն իրականանար, և բնականօրէն ազգը կը ծանրանայ իր վրայ:—Ս. Պատրիարք Հօր այս մտադրութեան առթիւ Լաթիքի մէջ գոհութեամբ կը կարդանք հետեւեալ տողերը. — «Հաւաստի աղբիւրէ իմացած ենք թէ Վարչապետը որ Հայոց Պատրիարքին հանդէպ յարգանք և մասնաւոր վերաբերում մը ունի, Դուբեան Պատրիարքի հրաժարականը երբէք չպիտի ընդունի և իր բոլոր պահանջներուն մէջ պիտի գոհացնէ զայն:»

ՀԱՍԵՐԱՇԻՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՅԻԿ ՅՈՅՑ ՄԸ

Վենետիկի Միսիթարեաններէն Հ. Սահակ Տ. Մովսէսեան, «Հայ ազգն եւ Թեքեան Կ.-Պատրիարք» խորագրով յօդուածի մը մէջ (Բիւզանդիսն թիւ 4163 66) շեշտելով նորընտիր Կ. Պատրիարք Թէրզեան Սրբազանի ազգասէր ընթացքը, որով Կիլիկեան մեծ աղէտքի ատեն դուրս եկաւ ան իրր «Մեծ

Հայ», ջերմապէս կը յանձնարարէ չարունակութիւնը նոյն համեմալս ոգիին: «Խորհրդաւոր հոսանք մ'անցաւ նոյն արիւնը կրող երակներուն մէջ, և անջատող պարիսպին հիմնաքարը խախտեցաւ, ու պարիսպն անառիկ ըլլալէ զաղբկցաւ: Ուրեմն ո՛ւր Դուբեան հոն և Թէրզեան, ուր Թէրզեան հոն և Դուբեան: Մեր սըրտին ներքին իղձին կը համալսաւախաւեն հաւակրելի Միսիթարեանին այս զգացումները: Ա՛յ բաւական է որքան ցուրտ քողաքաւորութիւն մը միայն ունեցան աղբին երկու հատուածները: Վիշտ, տառապանք և ուրախութիւն միասին պէտք է բաժնեն արեւակից եղբայրներ:

Հ. Սահակ նոյն յօդուածին մէջ անհրաժեշտ կը նկատէ նաեւ—ազգ. կրթութեան լաւ հիմերու վրայ դրուելուն համար—առանց դաւանանքի խտրութեան, արժանաւոր, կարող, հաստատաբար անձերէ Ուսումնական Ժողով մը կազմել: Այդպիսի ժողովի մը միջոցաւ վարժարանները փոփոքուած բարձրութեան մը հասցնելէ ետքը, «այլեւ անուրի է որ աղբին դաւակները—ի՛նչ դաւանանքի ալ պատկանին,—քովէ քով չնստին նոյն չէնքին մէջ, դատարարութեան նոյն առողջ զաղափստներով, նոյն մայրենի լեզուով»:

Միսիթարեան վարդապետը մատնանիչ կ'ընէ Հայ-կաթոլիկ հասարակութեան մէկ խոշոր սխալն ալ որ իր վրայ ամօթի դրուած ալ կը կրէ: «Հայ-կաթոլիկներու մեծ ռասի մը, գոնէ Պոլսոյ մէջ քէն կապելը հայ լեզուի դէմ... Ատոնց զաւակները, բարակ թելով մը կապուած Հայութեան հետ, օտար վարժարան մը նկուղեւուն պէս, այդ բարակ թափանցիկ թելը թելե շունչով մը կը փրթի»: Յօդուածագիրը տխուր բոյց ուժգին պատկեր մը կը պոկէ օտարանալու մօտ Հայ-կաթոլիկ սերունդին, և անոր տրամաբանքին՝ հայ լեզուին դէմ և այն ամէն բանի դէմ որ Հայութիւնը կը յատկանշեն, կը շեշտուի նաեւ անհրաժեշտութիւնը Հայ հոռմեական կրթին բարձրացման, «նախ իր անբաժիր վարքովն և ապա պատկառելի գիտութեամբ մը»:

Ձերօրէն կը մասնակցինք յօղուածա-
զիր վարդապետին յայտնած առողջ դաղա-
փարներուն: Կը սիրենք յուսալ թէ Հայ-
հոռմէական եղբայրներու գիտակից դասա-
կարգի մը զգացումներուն թարգման կը
հանդիսանայ այդ գրութեամբ: Մեծ յոյս և
վստահութիւն ունինք թէ բոլորն Տ. Պօղոս
Սրբազանի շրջահայեաց բայց կորովի ուղ-
ղութեան վրայ:

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՊԱՏՐԻ-
ԱՐՔԱՍԱՆԻ ՊԱՇՏՏՈՆԵՆՈՒԹԵԱՆ. — Նառն
Ժողովը Դժ. ի նիստին մէջ հարկ դատելով,
Ազգ. Սահմանադրութեան 13 յօդուածին
համեմատ, վերակազմել Ազգ. Պատրիարքա-
րանի վիճաններն ու պաշտօնէութիւնը, որո-
շեց մասնախումբ մը կազմել, թէ՛ այս
կազմակերպութիւնը և թէ յարակից կար-
գադրութիւնները սահմանելու համար: Ան-
դամ կարգուեցան Տ. Մաղաքիա Եպ. Տէ-
րունեան, Տ. Գնէլ Ծ. Վ. Գալէմբեար
եան, և Գր. Զօհրապ, Յակոբ Պոյաճեան,
Պարգև Փափաղեան և Սարգիս Սուրբ Էֆ. Նե-
րը: — Ազգ. Ժողովոյ Մայր Դիւանը՝ Նառն
Ժողովին հաղորդած էր երկու երեսփոխան-
ներու հարցադրերը և ժողովին բանաձևը՝
Պատրիարքարանի պաշտօնեաներէ ոմանց
վերադրուած արարքներուն և Պատր. Փո-
խանորդ հօր մասին: Ժողովը Փոխանորդ
հօր մասը իրեն վերապահեց: Միւս կողմէ
դիտելով որ Տնտես. Խորհուրդն արդէն
կը զբաղի այս խնդրոյն քննութեամբ, ո-
րոշեց այս մասին վերաբերեալ հարցադրը
և որոշուած բանաձևը հաղորդել Տնտես.
Խորհրդոյ, և հրաւիրել որ փութացնէ իր
քննութեանց տեղեկագիրը:

ՎԱՆԱՅ Գաւառական Վարչութիւնը
հետադրով կը խնդրէր փութացնել Սարա-
ճեան Տ. Յովսէփ Արքեպ. ի ուղեւորութիւնը:
Որովհետեւ Ն. Սրբապետութիւնն այս մասին
իրեն ուղղուած հեռագրին պատասխանած
էր թէ իր նամակին պատուի, Նառն Ժո-
ղովն արժան դատեց այս պարագան հա-
ղորդել Վանայ Գաւառ. Վարչութեան:

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ԱՆՊԱՐՏ ԱՐՁԱԿ-
ՈՒԱԾ. — Կեսարիոյ ծանօթ խնդիրներուն
պատճառաւ Շէյխ Իպրահիմի մարդոց կող-

մէ եղած զբաբոտութիւններու վրայ Տ.
Տրդատ Սրբազանի ղէմ Զորումի դատա-
րանին առջեւ բացուած դատը, որ փո-
խադրուած էր Կեսարիա, տեսնուել է
այնտեղ, և դատարանն անպարտ արձա-
կեր է Տ. Տրդատ Սրբազանը:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՈՐ Եկատելով որ վեր-
ջերս դարձեալ քահանաներ առանց Պատ-
րիարքարանի գիտութեան և հրամանին
Պոլիս կուգան, որոշեց ըստ առաջնոյն
յանձնարարել Փոխանորդարանի՝ պաշտօն
չտալ անոնց և անմիջապէս վերադարձնել
զանոնք իրենց տեղերը:

ՏԻՐԱՅՐ Ծ. Վ. Մարգարեանի նկատ-
մամբ եղած հրատարակութեան մը առթիւ,
Կրօն. Ժողովը նկատելով որ Յակոբ Էֆ.
Անթիքաճեան կը տեղեկացնէ թէ 1901
թուականին՝ ճիշտ ժամանակին՝ Տ. Տիրայր
Ծ. Վարդ. է առաջած է 10 օտմ. ոսկի
Ատարազարցի բոնտարեալ Յակոբ Լանփա-
չայեանի դատավարական ծախուց համար՝
նոյն ինքն Լանփաչայեանի խնդրանքով,
և այդ գումարը նպատակին ծախսուած է,
այլ ևս փակեալ համարեց խնդիրը:

ԴՊՐԵՎԱՆՔԻ նոր ընծայահուներու,
— ինչպէս նաև նախապէս վարդապետ ձեռ-
նագրուողներու — վարդապետական քեզերը,
Կրօն. Ժողովոյ որոշմամբ, այսուհետեւ պի-
տի պահուին Գալաթիոյ Ազգ. Մատենադա-
րանին մէջ:

ՎԱՐԱՑԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԸ, որ կատար-
ուեցաւ Յունիս 20ին, Տօն Կաթողիկէ Ե-
կեղեցւոյ, շատ բազմաթիւ եղաւ, իբր երախ-
տագիրտական զեղեցիկ ցոյց մը Հայոց Հայ-
րիկին, երջանկայիշատակ Տ. Մկրտիչ Կաթո-
ղիկոսին Խրիմեան: Օր առաջ հասած էր
ծանօթ ազգագրագէտ և հնագէտ Պ. Եր-
Լալեանց, իբրև պատգամաւոր Վն. Տ.
Մատթէոս Ս. Կաթողիկոսին, և Կովկասի
Հայոց Բարեգործական, Ազգագրական,
Գիւղատնտեսական և Տնայնագործական
ընկերութիւններուն: Էջմիածնի ձեմարա-
նին ուսուցչական խումբին կողմէ եկած
էր Պ. Միսաք Խոստիկեան: Հանդէսի օրը
Վարազայ վունքը լեցուած էր ծովածաւաղ
բազմութեամբ: Հանդէսի բեմը՝ յարդա-
րուած վանքի բակին մէջ՝ ճակատին վրայ

կը կրէր Հայրիկի պատկերը, զեղեւիկ գործ ծանօթ նկարիչ Պ. Փանոս Թէրլէմէզեանի, որ բերուած էր Թիֆլիզէն, Վասպուրականցիներու պատգամաւորութեան մը միջոցաւ: Եւ պատկերին տակ գրուած էր մեծագիր Արծուի մը, և երկու կողմերը Վարդայ տոճարի և Վարժապետական շէնքերու պատկերները: Առաւօտուն պատարագէն վերջ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ Խրիմեան Հայրիկին համար, և Կոստէ Անապատի Վանահայր Տ. Ստեփան Մ. Վ. Աղապատեան գրուած տեղ Հայրիկի կտաւարած մեծ գործը, և մատնանշեց Վարդի նշանակութիւնը: Յետոյ հացկերոյթ՝ 300 հրաւիրեալներու: Կր նախագահէր Կուսակալ Ֆուատ պէյ, չուրջն ունենալով պաշտօնական անձնակազմութիւններ, ուսում հիւպատոսն ելն: Ողբերգ ըմբռնիչ չկար, որով նաեւ բաժակածառ շիտուեցաւ: Ժամ 6ին հանդէսը բացաւ Առաջն. փոխանորդ Տ. Մեսրոպ Ա. քննչ. Ճանիկեան, որ բացատրելէ հոգը օրուան տօնը, յիշատակեց նախորդ Հորապետի և Վեհ. Տ. Մատթէոս Կաթողիկոսի կոնդակները: Այս վերջնով Ն. Ս. Օնոթիւնը կը շնորհաւորէր Վասպուրականի մոզովուրդը, և կը յայտնէր թէ իր կարգադրութեամբ Թիֆլիզի հանդանակիչ մասնախումբը 300 օսմ. ոսկի յատկացուցած է այս յորելեանին, որ պիտի մնայ անձնակազմի, սովորները միայն զործածելու պայմանով: Մէջ ընդ մէջ կը նուազէր զինուորական նուագախումբը: Անմիջապէս յետոյ բեմ ելաւ Պ. Նրուանդ Լաւայեանց, որ ազգու խօսքերով ողջունեց Վասպուրականը և անոր իմացական տօնը, յանուն Վեհ. Հայրապետին և Կովկասահայոց զանազան ընկերութիւններուն: Առաջնորդարանի քարտուղար Բրիս Էֆ. Թուրքերէն լեզուով կարդաց Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնը, զատելով զայն Միտհադ բաշայի և Նիազի և Էնվէր պէյերու կարգը, որ երկիրն առաջնորդեցին զէպի Ազատութիւն և Սահմանադրութիւն: Յետոյ յանձնախումբի քարտուղար Պ. Տիգրան Զիթունի կարդաց տեղեկագիրը, և բացաւ տրեց յորելեանի յետաձգման պատճառները: Կարգեց յանձնախումբի ընդարձակ քարարեութիւնները՝ ըլլոր հայաբնակ վայրերու և գաղութներու հետ, որոնցմէ՝ մասնաւորապէս Կովկասահայերէն՝ չիր քաջալերութիւն գտած է: Մերթ ընդ մերթ տեղացող անձրևի պատճառով համառօտ-

ուեցան կարգ մը բանախօսութիւններ, և տեանք բնաւ չիօնեցան: Զկարդացուեցան նաեւ ուղղուած բազմաթիւ հեռադրեր, որոնցմէ յիշատակելի են Վեհ. Հայրապետին, Կովկասահայ Ընկերութիւններու, Թիֆլիզի, Գահիրէի, Ամերիկայի և Վանայի զաւթականութեանց հեռադրերը, Մեակ, և Աղբիւր—Տարազ թերթերու շնորհաւորութիւնները, Մշոյ առաջնորդ Տ. Ներսէս Եպ. Խարախանեանի, Կ. Պոլսէն Միացեալ ընկերութեանց, Մոսկուայէն Ժամհարեան եղբարց հեռադրերը, և ընդ իւրեանց թղթակիցը որմէ կը քաղենք այս տեղեկութիւնները, նշանակութեան արժանի կը նկատէ Ազգ. Պատրիարքարանի, և Կ. Պոլսոյ Վանեցի ազգայնոց ձեռնպահութիւնը, որ իրապէս շատ ցաւալի է, արդիւնք կեղբ. յանձնաժողովին հետ յառաջ եկած թիւրիմայութեան մը, որու հետեւանօք պէտք եղած մշտմը չարուեցաւ այս իրապէս օղտաշատ գործին:

Նիւթական արդիւնքին դառով, Վեհ. Հայրապետին կարգադրութեամբ Թիֆլիզի հանգանակիչ մասնախումբին յատկացուած 300 ոսկիէն դատ, 500 բուբլի նուիրած են Մոսկուայի Ժամհարեան կարգար, 1100 բբլ. Իւզովկայի, և 150 բբլ. Թիֆլիզի զաւթականութիւնները: Վանէն ցարդ զոյացած է 200 ոսկի: Ամերիկայէն Հայրիկեան Փոնտի յանձնաժողովի անդամ Պ. Աւետիս Զիթմեան կարծիք յայտնած է նոյն զրամադրութիւն Ամերիկա գտնուած 1000 ոսկիի չափ գումարն ալ յատկացնել յորելեանին, և Վարդի մէջ բանալ Բօլէճ մը՝ զիւղատնտեսական ճոխ բաժնով: Այս նպատակով Զանքեր կ'ըլլան Ամերիկա և Եգիպտոս: Հայրիկեան Փոնտի սակի մեծ գումար մ'ալ, իբր 2000 ոսկի, կը գտնուի Կովկաս, և կը լսուի թէ Վեհ. Հայրապետը որոշած է անոր կէսը Վարդին և կէսն ալ Մշոյ յատկացնել, ուր Հայրիկը նոյնպէս գործ ունեցած է:

Յորելեանի զեղեւիկ հանդէսէն հոգը, կարգը եկած է լուրջ Զանքերով իրաւործելու զեղատնտեսական վարժարանի գաղափարը, որ ճշմարիտ բարիք մը պիտի ըլլայ Վասպուրականին:

ԱՐՏՈՆԱՏԻՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԲՆՆԵ. ԼԵՐԱՂԱՅԱՆ

ՏՆՈՒՆ-ԽԱՐԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԲՆՆԵ. ԼԵՂԱՐԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԷՍ ՆԵՐՍԷՍ

ՅԱՃԱՐՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԲՈԼՈՐ ԱՆՈՆՑ որ թերթն ընդունելով հանդերձ, տակաւին կը յապաղեցնեն բաժնեգիրն ռաւարդումը, կը յիշեցնենք թէ ծախքերը կանխիկ են և բաժնեգիրներն ալ կանխիկ՝ ըստ սովորութեան: Յարգանքի ցոյց մ'է որ կ'ընէ խմբագրութիւնս թերթի նաւարդումը շարունակելով: Բայց ամեն բան ահման մ'ունի:

Ուշագ, Կ. Պ. Բ. — Կը յանձնարարենք փութացնել բաժնեգիրներու առաքումը: Երկրորդ վեցամսեակին առաջին ամիսն ալ կ'անցնի, և տակաւին խոստում մ'իւայն կ'ստանանք: Չվճարողներուն, ձգձգողներուն անունն հաճեցէք խմացնել: Տարրական պարկեշտութիւնը կը պահանջէ վճարել ընդունուած բաժանորդագրութիւն մը որ կանխիկ է: Ծախքերը ապառիկ չեն այսուհ:

Պեղան, Վ. Բ. Մ. — Ստացանք բաժնեգիրն:

Պաճրա, Կ. Գ. Բ. — Ստացանք երկու բաժնեգիրն: Ստացաղբերը կը զրկուին:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԷՆ

ԶՈՐՍ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐԸ, Ա. Արգաւաւարութիւն. — հեղինակ Էմիլ Զօլա, Թարգմ. Եր. Օսեան: Ա. հատոր, Գին 3 ղրշ:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ. — հեղինակ Ժիւլ Վեռն, Թարգ. Զարեհ Ն. Պեղաբեան: Գին 100 փրշ:

ՅՈՎՃ. ԳԸԼԸՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԷՆ

ՀԱՅԸ ԻՆՉՈՒ ՀԱՅԴՈՒԿ ԵՂԱԻ ՂՐԵԿ Կաղնոս: Յուշեր լուսավարութեան օրերէն: Գին 3 ղրշ:

ԶԳԻՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Հեղինակ Տոմ. Ֆլինք՝ Էսթիմուրկի համալսարանէն, Թարգմանեց Ս. Հ. Դալեօնեան (Սըվաղ), Գին 3 ղրշ:

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՇԻԹԵՐ, ՂՐԵԿ ԶԵՆԻԿ. — քերթուածներու հատորիկ մը: Գին 3 ղրշ:

ԿԱՅԼԱԿ, ՂՐԵԿ ՅԱԿՈԲ Ա. ԱՐԱՄԵԱՆ, Դերթուածներու հատորիկ մը, Գին 3 ղրշ: ԿԱՅԾԿԼՏՈՒԹ, ՂՐԵԿ ՅՈՎԻ. Մ. Խ. Դմբեքեան. քերթուածներու տետր մը:

ԱՐԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ, ՂՐԵԿ ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ, Տպգր. Նիւ-Եորք, Գին 3 սէնթ:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ, Երկրաստան տետր լով թատերգութիւն. — Շարագրեց Վեր. Աւարիս Տարագճեան: Տպգր. Մարգուտն՝ Ներսիս-Սրապեան տպարան, Գին 40 փրշ:

ՆՈՐ ԾԱՂԿԵՓՈՒՆՁ, ԸՆԹԵՐԳԱՐԱՆ. Գրեց Մ. Սեպուհ, Գին 1 ղրշ:

ԳՐԱՑՈՒՑԱԿ ՅՈՎԻ. Գըլընեան գրատան: Զրի:

Գ.Բ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՈՒՐՈՒՍԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ, Ի սկզբանէ մինչ ցԱրեակունի Հարսուրեան: Բ. տպագր. Վեռնիկ: Գին 3 ղրշ:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐԾՆՆԵՐԸ, Բ. Տպագր. Կ. Պօլիս. — Գին 6 ղրշ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԾՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԾՍՈՒԹԻՒՆ. — Աղգ. վարժարանաց համար պատրաստուած դասագիրք մը: 128 էջ, 35 կաղնախօսական ընտիր պատկերներ: Գին 3 ղրշ:

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՐՑ ԵՒ ՇՆՈՐՀԱԼԻ. — Պատմա-ֆնական տետրիւն. — Գրեց Արտաւազդ Մ. Վրդ. Գալէտէրեան: Երիտասարդ Արմաշականին վարդապետական ձեռնագրութեան առթիւ գրուած theseն է այս հատորիկը, որ Մարգուտնի Ներսիս-Սրապեան տպարանէն իւրոյս ելած է մաքուր տպագրութեամբ: Ազգային-եկեղեցական պատմութեան կարեւոր մէկ դրուագը կը պատկերացուի ասով, միեւնոյն ատեն ծանօթացուելով հոյակապ երախտաւոր դէմք մը՝ Հայ Մատենագիր-կաթողիկոսներու շարքին մէջ: Գին 4 ղրշ: Կեդրոնատեղի Եազըճեան գրատուն. Սուլթան Համամ, պազըրճըլար:

Գին 40 Փարա
